

մից, որովհետեւ դրանով կտրուում է քերականական կապակցութիւնը նախադասութեան «որ է Աստուած յԱստուծոյ» եւ «եկն եւ փրկեալ մարդի մարդկանէ» մասերի միջեւ. իսկ այդ կտրուածութիւնը վերացնելու համար լաւագոյն դէպքում անհրաժեշտ է լինում աւելացնել մի շաղկապ: Ինչպէս երեւում է՝ այդ կտրուածութիւնն զդարձնում է, որ հրատարակիչը, բնագիրը լատիներէնի թարգմանելիս, անհրաժեշտաբար աւելացրել է «եւ» շաղկապը. «qui est Deus de Deo, et venit et factus est homo ex muliere»¹⁷:

Մենք ԱՀում այդ ստորադասութեան տեղադրեցինք «յԱստուծոյ» բառից առաջ եւ դրանով երեւան եկաւ նախադասութեան անթերի ներդաշնակութիւնը՝ առանց շաղկապի. «որ է Աստուած, յԱստուծոյ եկն...»:

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍՅԱՆ

17. Անդ, էջ 75: Մեր կարծիքով՝ «Աստուած յԱստուծոյ» կարդալու մղումն առաջացել է հաւատոյ հանգանակի «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ» արտայայտութիւնից:

Résumé

LES SOURCES DU RECUEIL «ARMAT HAWATOY»
YAKOB SRCEC'I - ZENOB EDESAC'I - DAHEL EDESAC'I

HAKOB ANASSIAN

C'est la troisième partie d'une série d'articles dont les deux premières avaient été publiées naguère dans la revue «Ejmiacin» (1977, nos 8 et 12). Le but de l'auteur n'est pas celui de proposer une théorie des sources du recueil, mais bien celui de vérifier leur rapport mutuel selon les données textuelles. Sont examinés ici trois fragments de Yakob Srcec'i (Jacques de Saroug), trois fragments de Zenob d'Edesse et un fragment de Daheł d'Edesse, connu aussi comme At'ełaha Ourhayec'i (Aithalla d'Ourha).

ՍԻՄԱՔԵԱՆ ՄԻ ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԶԱԳՐԵՐՈՒՄ

(ՎԵՑԻՋԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Մեր թուականութեան Գ. դարում, երբ Որոգինէս Աղեքսանդրացին ձեռնամուխ էր լինում Հին Կտակարանի յունարէն Եօթանասնից կոչուած Հին թարգմանութեան բնագրական ստուգման ու վերաքննութեան աշխատանքներին, անհրաժեշտ էր համարել նաեւ հաշուի առնել երբայեցեւորէնից յունարէն կատարուած մի քանի նոր թարգմանութիւններ, որոնք կարող էին որպէս եղբ ծառայել համեմատութիւնների համար: Այդպիսիներ էին Բ. դարում Ալիւղաս Պոնտացու, Սիմաքոս Սամարացու եւ Թէոդոտիոն Եփեսացու կատարած թարգմանութիւնները:

Որոգինէսի աշխատանքների էութիւնը կայանալու էր գոյութիւն ունեցող գիտական այս հիմունքները միասնաբար ընդգրկելու ատակ մի կառոյց ստեղծելու մէջ: Այդ կառոյցը հանդիսացաւ Վեցիջեան (Τὰ Ἑξαπλᾶ) անուանեալ նրա նշանաւոր աղիւսակը, որը կազմուած էր վեց սիւնակներից:

1. Եբրայական բնագիրը՝ եբրայական տառերով. 2. Եբրայական բնագիրը՝ յունական տառադարձութեամբ. 3. Ալիւղասի թարգմանութիւնը. 4. Սիմաքոսի թարգմանութիւնը. 5. Եօթանասնից բնագիրը՝ ըստ Որոգինէսի համեմատութեան արդիւնքների. 6. Թէոդոտիոնի թարգմանութիւնը:

Այս աղիւսակի Երդ սիւնակի հիման վրայ է, որ յետագայում Պամփիլոս եւ Եւսեբիոս Կեսարացիները կազմեցին Եօթանասնից թարգմանութեան վերանայուած բնագիրը, եւ այս վերջինս է այն «հաստատուն», «ճշմարիտ» եւ «ստույգ» օրինակը, որից եւ, ինչպէս ասում են մեր պատմական աղբիւրները, առաջացաւ հայկական թարգմանութիւնը:

Յունական Եօթանասնիցի այդ քննական օրինակների, ինչպէս եւ նրանից ծագած հայկական, ասորական եւ այլ թարգմանութիւնների

հնագույն նմոշներից շատերի վրայ յաճախ են երեւում որոշիւնեան Վեցիջեանի որոշ հետքեր՝ պաթմանական նշաններով եւ կամ նրա այս կամ այն սիւնակի ընթերցումների նշումներով: Այդ հետքերը երբեմն շատ ուշադրաւ են՝ սուրբդրային բնագրական հետազոտութիւնների բնագաւառում ունեցած իրենց որոշիչ դերով: Այդպիսի դէպքերը թանկարժէք են նաեւ հէնց Վեցիջեանի պատմութեան համար ընդհանրապէս, նկատի ունենալով, որ Վեցիջեանն իր ամբողջական կազմով չի հասել մեզ, այլ միայն որոշ մասերով՝ հատակոտորներով:

Աստուածաշունչ Մատեանի հայկական թարգմանութիւնը, որը յունական Եօթանասնիցի լաւագոյն ներկայացուցիչներից մէկն է, ԺԳ-ԺԴ. դարերում ընդօրինակուած բազմաթիւ ձեռագրերում կրում է, Վեցիջեանի այդ նշանների հետ, նաեւ լուսանցային որոշ տարբերութեցումներ՝ Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թէոդոտիոնի թարգմանութիւններից: Այսպիսիներ են՝ Երեւանի Պետ. Մատենադարանի թիւ 178 (1253-55 թթ.), թիւ 4243 (1263 թ.), թիւ 345 (1270 թ.), թիւ 193 (1271 թ.), թիւ 179 (1292 թ.), թիւ 177 (1292 թ.), թիւ 180 (1295 թ.), թիւ 353 (1317 թ.), թիւ 206 (1318 թ.) ձեռագրերը եւ ուրիշներ: Այսպիսի մի օրինակ է նաեւ Ս. Ղազարի Մխիթեան Մատենադարանի թիւ 1 ձեռագիրը (1319 թ.), որը եւ հայկական Աստուածաշունչի քննական առաջին հրատարակութեան համար որպէս հիմնական օրինակ է ծառայել Հ. Յովհաննէս Զօհրապեանին (Վենետիկ, 1805 թ.): Այս իրողութեան մասին խօսելու առիթով՝ մենք ուշադրութեան առարկայ էինք դարձրել հետաքրքրական մի փաստ: Դա այն էր, որ մի քանի ձեռագրերում Բ. Թադաւորութեանց Գ. զխի 33րդ համարում միեւնոյն նախադասութիւնը կրկնուել էր երկու տարբերակով.

Միթէ որպէս մեռանիցի անգգամ՝ մեռաւ Արեմներ, Եթէ ԸՍՏ ՄԱՀՈՒԱՆՆ ՆԱԲԱՂԱՅ ՄԵՌԱԻ ԱԲԵՆՆԵՐ²:

Հետազոտութիւնները ցոյց էին տալիս, որ այստեղ միակցում էր տեղի ունեցել միեւնոյն նախադասութեան տարբեր ծագում ունեցող երկու թարգմանութիւնների, որոնցից երկրորդը («Եթէ ըստ մահուանն Նաբաղայ մեռաւ Արեմներ») բնագրի բուն եւ միակ ճիշտ ընթերցումն էր, ինչպէս հաստատում էր յունարէն Եօթանասնիցի թարգմանութեան բնագիրը (εἰ κατὰ τὸν θάνατον Νάβαλ ἀποθανεῖται Ἀβεν-

1. Հայերէն ձեռագրերում եղող այս տեղեկութիւնների եւ նրանց վերաբերող յարջող մանրամասնութիւնների մասին մի անգամ ընդ միշտ տեսնել մեր «Հայկական մատենագիտութիւն» աշխատութեան Բ. հատորը, Երեւան, 1976, էջ 331-334:

2. Երկու տարբերակներն փրարից զանազանելու համար՝ առաջինը տուեցինք արեւմտեան տառերով, իսկ երկրորդը՝ զլիազեր տառերով:

նիթ)³, որն աղբիւրն է հայկական թարգմանութեան: Այս նոյն ընթերցումն ունեն, բնականաբար, նաեւ մեր հայերէն հնագույն օրինակները, ինչպէս՝ Երեւանի Պետ. Մատենադարանի թիւ 178 (էջ 165ա), թիւ 345 (էջ 206բ) եւ թիւ 177 (էջ 147բ) ձեռագրերը, որոնք 1253-1292 թթ. շրջանում են ընդօրինակուել: Սակայն այս վերջին երեք գրքերը մի նոր երեւոյթ էին պարզում: Նրանք լուսանցներում ունէին «միթէ որպէս մեռանիցի անգգամ՝ մեռաւ Արեմներ» ընթերցումը, որ պէտք է լինէր Սիմաքոսի յունարէն թարգմանութիւնից, ինչպէս ցոյց էր տալիս «Սիւմ» նշումը:

Բ. Թադաւորութեանց գրքի տուեալ համարում հայերէն ձեռագրերով յայտնուող այս փաստը յայտնի էր արդեօք յունարէն Եօթանասնիցի բնագրային պատմութեան մէջ: Այս հարցման պատասխանն՝ ապաստելի էր գտնել Վեցիջեանում, քայքայ նրա բնագիրն, ինչպէս ասուեց, մեզ հասել է միայն հատակոտորներով: Բենեդիկտեան դիտնական Բ. դը Մոնֆօկոնն ի մի էր հաւաքել այդ հատակոտորները՝ իր հանրածանօթ հրատարակութեան մէջ⁴:

Նշենք, որ այս հատակոտորների միջավայրում լիքաւ թերի է Բ. Թադաւորութեանց Գ, 33 համարի վերաբերող տողը, ուր պահպանուել են միայն առաջին եւ 5րդ սիւնակները, իսկ 2րդ, 3րդ, 4րդ եւ 6րդ սիւնակներն անհետ կորած են, հետեւաբար՝ դատարկ են նաեւ Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թէոդոտիոնի թարգմանութիւնները ներկայացնող սիւնակները⁵:

Մեր հարցում մեզ օգնութեան է դալիս 5րդ սիւնակը, ուր տեղադրուած ենք գտնում նախ Եօթանասնիցի հիմնական ընթերցումը՝ «εἰ κατὰ τὸν θάνατον Νάβαλ» (Եթէ ըստ մահուանն Նաբաղայ), եւ ապա՝ մի տարբերակ, որը հէնց մեր որոնածն է՝ «μὴ ὧς ἀποθανεῖται Ἀβεν-ἄφρων» (միթէ որպէս մեռանիցի անգգամ):

Սակայն ըստ ինքեան տարօրինակ էր, որ այս տարբերակը, եթէ տարբերակ էր, գտնուէր 5րդ սիւնակում, որ Եօթանասնիցի հարա-

3. See The Old Testament in Greek according to the Septuagint, edited by Henry Barclay Swete, vol. I, Cambridge, University Press, 1887, p. 618.

4. Hexaplorum Origenis quae supersunt, multis partibus auctoriora, quam a Flaminio Nobilio et Joanne Drusio edita fuerint. Ex manuscriptis et ex libris editis eruit et notis illustravit D. Bernardus de Montfaucon, monachus Benedictinus e Congregatione S. Mauri, vol. I-II, Parisiis, 1713.

Այս աշխատութիւնը ներմուծեալ արտատպուել է J.-P. Migneի հիմնած յունական յայտնի մատենադարում՝ PG (Patrologiae cursus completus, series graeca), t. XV, XVI/1, XVI/2, XVI/3, Parisiis-Turnholti, C. Delarue եւ C. V. Delarueի հրատարակութեամբ:

5. DE MONTFAUCON, t. I, p. 321. Նաեւ PG, t. XVI/1, col. 27-30.

զատ ու հիմնական ընթերցումների տեղն էր, իսկ տարբերակները տեղերը միայն Յրդ, Կրդ եւ Նրդ սխալակներն էին: Այս տարօրինակութեան պատճառն այն էր, որ «μὴ ὧς ἀποδύσκει ἄφρων» տարբերակը աւերուած Վեցիջեանի բեկորների մէջ չէ, որ յայտնաբերուած էր, այլ յունարէն Եօթանասնիցի մի գրչագրում եւ, որպէս ծաղու-մով անծանօթ տարբերակ, մուծուած էր Տրդ սխալակի մէջ: Մոնֆօկոնը, համապատասխան ծանօթագրութիւնների քաժնում, որպէս աղբիւր ցոյց էր տալիս Կոյիսիինեան Մատենադարանում գտնուող յունարէն Եօթանասնիցի ձեռագրերից երկրորդը՝ Codex Coislinianus alter⁶, իսկ այս աղբիւրի մասին՝ տեղեկատու բաժնում ասուում էր. «Codex alter Coislinianus X. saeculi, egregiae notae, unde multa excerptimus»⁷:

Ուրեմն՝ յունարէն այս գրչագիրը միակն էր, որ ունէր խնդրոյ առարկայ տարբերակը: Սակայն, այս ստոյգ տեղեկութեան հետ միասին, անստոյգ էր մնում մի հարց: Տուեալ գրչագրում «μὴ ὧς ἀποδύσκει ἄφρων» ընթերցումը «εἰ κατὰ τὸν θάνατον Νάβαλ»-ի փո-խարէն հանդէս եկող մի նոր ընթերցում էր, թէ պարզապէս լուս-անցքում նշուած մի տարբերակ, ինչպէս էր մեր հայերէն վերոյի-շեալ գրչագրերում: Այս կարեւոր պարագայի նշումը դուրս էր մնա-ցել Մոնֆօկոնի ուղղորդութիւնից:

Ի խնդիր այս նորութեան՝ մենք դիմեցինք Վեցիջեանի քննական նորագոյն հրատարակութեանը, որ կատարել է Ֆ. Ֆիլդը: Վերջինս Բ. Թագաւորութեանց գրքի տուեալ համարի վապակցութեամբ նոյ-նութեամբ որդեգրում է Մոնֆօկոնի տուեալները եւ խնդրոյ առար-կայ տարբերակի համար ցոյց տալիս նոյն Cod. Coisl. alter, բայց՝ ճշտելով ու նշելով, որ գրչագրում բնագրի ընթերցումը Եօթանա-սնիցին յատուկ «εἰ κατὰ τὸν θάνατον Νάβαλ» (եթէ ըստ մահուանն Նաբաղայ) ընթերցումն է, իսկ «μὴ ὧς ἀποδύσκει ἄφρων» (միթէ որպէս մեռանիցի անգգամ) տարբերակը լուսանցադրութիւն է⁸,

6. DE MONTFAUCON, t. I, p. 322. Նաեւ PG, t. XVI-1, p. 34.

7. DE MONTFAUCON, t. I, p. 273. Նաեւ PG, t. XV, p. 1267.

Յոմարէն այս գրչագրի մասին տես նաեւ De Montfauconի հետեւեալ աշխատութիւնը. *Bibliotheca Coisliniana olim Segueriana, sive manuscriptorum omnium Graecorum quae in ea continentur accurata descriptio*, Parisiis, 1715.

8. *Sto Origenis Hexaplorum quae supersunt, sive veterum interpretum Graecorum in totum Vetus Testamentum fragmenta. Post Flaminium Nobilium, Drusium, et Montefalconium, adhibita etiam Versione Syro-Hexaplari, concinnavit, emendavit, et multis partibus auxit Fridericus Field*, t. I, Oxonii, 1875, p. 552, վերսկ. Hildesheim, 1964:

ճիշտ այնպէս, ինչպէս է մեր հայերէն գրչագրերում, միայն այն կա-րեւոր տարբերութեամբ, որ մինչ մեր գրչագրերը տեղնուտեղը նշում են տարբերակի հեղինակի անունը՝ Սիմաբեա, յունարէն գրչա-գիրն անդիտանում է այդ պարագան. եւ արդէն այդ է պատճառը, որ Մոնֆօկոնը եւ, նրա հետեւողութեամբ, Ֆիլդը չկարողանալով որոշել, թէ այդ տարբերակը Վեցիջեանի Յրդ, Կրդ եւ Նրդ սխալա-կներից ո՞ր մէկին կարող էր պատկանել, հարկադրաբար տեղադրել էին Տրդի մէջ, որը նրա տեղը չէր:

Արդ՝ Եօթանասնիցի յունարէն յայտնի գրչագրերի շարքում Cod. Coisl. alter, որը Ժ. դարից է, առ այժմ միակն է, որն ունի այս տարբերակը: Այդ մասին է վկայում նաեւ տարբերակում գտնուող ἀποδύσκει եւ ἄφρων բառերի բացակայութիւնը Եօթանասնից ընդ-հանուր համարաբառում, որ է՝ A Concordance to the Septua-gint and the other Greek Versions of the Old Testament (Includ-ing the Apocryphal Books), by the late Edwin Hatch, M. A., D. D. and Henry A. Redpath, M. A., assisted by other Scholars (Graz-Austria, Akademische Druck- u. Verlagsanstalt, 1954, Vol. I-II). Չմոռանա՛ք, որ այս հրատարակութեան մէջ հանգամանորէն հաշուի են առնուած Եօթանասնիցի յունարէն բնագրի հետ առնչուող բոլոր տուեալները, ներառեալ՝ վեցիջեան-երբայականները:

Այսպիսով՝ հայկական ձեռագրական տուեալների միջոցով վե-րայայտնում է որոշիչեան Վեցիջեանի կորած բեկորներից մէկը. Բ. Թագաւորութեանց Գ, 33 համարին վերաբերող ստոյգ Կրդ սխալա-կը, որ բաց էր մնում մինչեւ այժմ, լրացւում է սխալքեան «μὴ ὧς ἀποδύσκει ἄφρων» (միթէ որպէս մեռանի անգգամ) տարբերակով:

Այսքանը՝ Վեցիջեանի պատմութեան համար:

Վերադառնա՛ք, սակայն, հայերէն գրչագրերին: Վերեւում տե-սանք, որ հայկական Թարգմանութեան հարադատ ընթերցումը «եթէ ըստ մահուանն Նաբաղայ» էր, բայց գրչագրերից երեքը, որոնք հա-յերէն գրչագրերի հնագոյն վիճակն են ներկայացնում, լուսանցքնե-րում ունէին «միթէ որպէս մեռանիցի անգգամ» տարբերակը: Այժմ աւելացնենք, որ յետագայ ժամանակների ընթրինակութիւններից շատերում սխալքեան այս ընթերցումը լուսանցքներից անցել է բնա-գրի մէջ՝ համատեղուելով նախկին՝ հարադատ ընթերցումի հետ: Այսպէս՝ երկու ընթերցումներն արդէն համատեղուած են Նրեւանի Պետ. Մատենադարանի թիւ 180 ձեռագրում (էջ 138բ), որը 1295 թը-ւականից է, եւ թիւ 345 ձեռագրում (էջ 152ա), որը 1317 թւականից է: Այսպէս եւ՝ ուրիշ շատ ձեռագրերում. բաւական է ասել, որ Աս-տուածաշնչի Զօհրապեան հրատարակութեան համար օգտագործուած ձեռագրերն, անխտիր քոյրորն էլ, ունեն նոյն երկու տարբերակները:

Համատեղումը ընթերցումը: Այս երեւոյթի հետ պէտք է յիշել եւ այն, որ Երեւանի թիւ 206 ձեռագրում, որը 1318 թուականից է, սիմաքեան տարբերակը լուսանցքից անցել է բնագրի մէջ՝ փոխարինելով նախկին ընթերցմանը, իսկ վերջինս դուրս է բերուել լուսանցքի վրայ (էջ 131բ): Հաւանաբար կը պատահեն այսպիսի ուրիշ ձեռագրեր եւս:

Սրանք են սիմաքեան նորայայտ տարբերակի կենսագրական դեծերը հայկական գրչագրերում:

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍԵԱՆ

9. Հմմտ. Աստուածաշունչ մատեան (Հրատ. Հ. ՅՈՎՀ. ԶՈՀՐԱԳԵԱՆԻ, ժեծդ.), Վենետիկ, 1805, էջ 194:

Résumé

UNE VARIANTE DE SYMMAQUE DANS LA VERSION ARMENIENNE DE LA BIBLE (POUR L'HISTOIRE DE L'HEXAPLAR)

HAKOB ANASSIAN

L'auteur analyse ici la présence simultanée de deux variantes du verset 33 du II^e Livre des Rois, ch. III, dans certains manuscrits arméniens (dont trois sont pris en considération: mss 178, 345, 177 du Matenadaran). Cette particularité est expliquée par l'auteur en remontant à l'Hexaplar origénien; c'est une des traces de son utilisation dans la version arménienne de la Bible.

DUE EPIGRAFI DI DONAZIONE A S. STEFANO DI GIULFA

La facciata occidentale della chiesa maggiore del monastero armeno di S. Stefano di Giulfa (Iran)¹ è fittamente decorata da molte decine di epigrafi: la maggior parte di esse ha carattere votivo e memoriale, solo alcune riguardano le opere di edificazione o di restauro, due si differenziano nettamente in quanto registrano un atto di donazione.

Queste due iscrizioni, finora inedite², si trovano alla base di due piccoli *xač'k'ar*, collocati sul lato sinistro della nicchieta posta al centro della grande nicchia nord del prospetto occidentale della chiesa.

I *xač'k'ar* sono modesti dal punto di vista artistico, ma accuratamente eseguiti, come la maggioranza di quelli che ornano gli edifici di S. Stefano.

L'epigrafe alla base del *xač'k'ar* superiore è la seguente:

1 ս(ուր)ք ի(ս)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է աստ(ա)պ(ա)տցի խօջա գալ
ուստին եւ որդոցն եղեալաբին սոդո

1. Il monastero di S. Stefano Protomartire, oggi in territorio iraniano, a circa 15 km. dal posto di frontiera di Giulfa, è noto nella storia armena sotto il nome di Mařardavank', dall'omonimo monte sulle cui pendici sorge. Lo si conosce anche come monastero di řamb (o Darařamb), villaggio ora abbandonato, nelle cui vicinanze si trova.
2. Delle circa centocinquanta epigrafi, che costituiscono il *corpus* di S. Stefano, una ventina sono state pubblicate (o ripubblicate) nelle opere che seguono: Յ. ՇԱՀԻՍԱՌՈՒՆԵԱՆԵՑ, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հիմն գաւառացն Արարատայ, Vafarřapat, 1842; Մ. ՓԱՓԱՋԵԱՆ, Հնութիւնք վաղորդից Հայոց, Vafarřapat, 1890; Գ. ԱԼԻՇԱՆ, Սիւսական, Venezia, 1893; Մ. ՍՄԱՆՏԵԱՆ, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից երջնկայ եւ շրջակայից Ադրա, Tiflis, 1904; Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ, Իրանի հայկական վանքերը, Teheran, 1971; G. ULUHOĞIAN, in «Documenti di Architettura Armena»,